թեամբ՝ 'ի սէր Աստուծոյ բարձէք զպատկերս և զկանթեղս ձեր որ 'ի կողմն Հայոց, եւ նոքա բարձին զնոսա տրամութեամբ, և Հայք եդին 'ի տեղիս նոցա սկսեալ 'ի դրանէ եկեղեցւոյն մինչեւ 'ի դուռն Այրին, և յերկոսին սեղանսն, և կախեցին զկանթեղս՝ ըստ թուոյն՝ զորս բարձին Ցունք. իբրեւ իջին յԱյրն կախել զկանթեղսն 'ի մէջ կանթեղաց երկուց ազգաց 'ի մի շար յարեւելից յարեւմուտս. չգտին անդ բեւեռ, եւ զնորն հարկանելոյ արգելին Լատինք, և յորոնելն գտին յաջմէ եւ յահեկէ շար կանթեղացն, բայց Լատինք դարձեալ արգելին 'ի հարաւային կողմանէ, զի առաջի Մարոյ տեղւոյն էր, եւ զկնի բազմադիմի բանից կախեցին զվեց կանթեղսն, եդին եւ աշտանակ մի 'ի կարգս աշտանակաց Լատինաց և Ցունաց, և 2 պատկերս յաջմէ և յահեկէ խորանին, այլ 'ի բարձրացուցանել Ցունաց զձայնս իւրեանց, Դատաւորն արգել զՀայս, զի խնդրէին կախել նաեւ զվարագոյրս, ապա կախեցին զմի կանթեղ ըստ Ցունաց առաջի դրան Այրին, խնդրեցին և բաժանորդ լինիլ վարագուրին որ 'ի վերայ դրան, այլ Դատաւորն արգելը Ցետ այնորիկ եկեալ կացին առաջի սաչտոնէից լռութեամբ. Դատաւորն ասէ՝ գնացէք կենցաղավարեցէք իբրեւ եղբայր եւ օրհնեցէք զԱրքայ։ Օրհնեցին Հայք զԱրքայն, զորդիս նորին, և զաշխատաւորս, ապա ասէ՝ գնացէք ընդէ՞ր կայք. Հայք ասեն՝ ո՞ւր երթիցուք՝ Թագաւորն բաժանորդութեամբ ետ մեզ զԱյրն, և դուք թերի թողիք ամենայն իրօք, բայց յուսամք չնորհիւ Արքայի և ձեր կատարեսցին, այլ ո՞րպէս պարտ է առնել զգործ պատարագին. յերից մասանց եկեղեցւոյն մի մասն տուաւ ձեզ 'ի սեփհականութիւն գիտութեամբ այլազգեաց և վկայութեամբ երկուց ազգաց, խորանօք, պատկերօք և ամենայն սպասուք, և այսուհետեւ չունի ոք լինիլ միջամուխ յայն տեղի, յամենայն ժամ կատարեցէք զաղօթս և զպատարագս ձեր. Հայք խնդրէին հրամայել զպատարագն Այրին եւ յայտնապէս պատուիրել Ցունաց զի մի լինիցին խոչ։

Դատաւորն ասէ՝ այս երիցս եղեւ զի կրկնէք, Այրն բաժանորդ է 'ի մէջ երկոցունցդ ըստ օրինաց ձերոց ծխից մի լինիք արգելք միմեանց. Ցոյնք ասասցեն բերանովք